



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Ս. ՊԱՏԱՐԱԳ «ԱՐԱՐԱՏ» ՏԱՆ ՄԷՋ

Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով, Ուրբաթ, 10 Օգոստոս 2007, առաւօտեան ժամը 10:00-ին, հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ Թեմիս հոգեւորականաց դասուն՝ «Արարատ» Տան հիւանդանոցի բաժնի սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նուիրուած շարականի երգեցողութիւն, խաղողօրհնէք եւ հաւաքական խոստովանանք, եւ հաղորդութիւն տրուեցաւ տարեց մամիկներուն եւ պապիկներուն, որոնք անկարող էին «Արարատ» Տան մատրան մէջ Աստուածածնայ տօնին յատուկ եկեղեցական արարողութեան եւ Ս. Պատարագին մասնակցիլ:

Ճաշարահէն ներս արարողութեանց աւարտին, Ս. եւ անմահ Պատարագ մատուցուեցաւ «Արարատ» Տան մատրան մէջ: Ս. Պատարագը մատուցանեց եւ այս առթիւ քարոզեց Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Նարեկ Քիւյ. Փեղիվանեան: Յընթացս Ս. եւ անմահ Պատարագի՝ կատարուեցաւ հաւաքական խոստովանանք եւ խաղողի օրհնութեան աւանդական արարողութիւն:

Եկեղեցական արարողութեանց աւարտին, հոգեւոր հայրերը այցելեցին «Արարատ» Տան բնակիչներուն եւ իրենց բարեմաղթութիւնները փոխանցեցին պատասպարեալներուն, ինչպէս նաեւ պատասխանատուներուն եւ անձնակազմի անդամներուն:

ON THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

DIVINE LITURGY CELEBRATED AT ARARAT HOME

On the morning of Friday, August 10th, the Feast of the Assumption of the Holy Mother of God was celebrated with Divine Liturgy at Ararat Home in Mission Hills presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of Prelacy clergy members.

The blessing of the grapes and offering of Communion took place prior to the Divine Liturgy in the hall of the hospital section for those who could not attend services in the chapel. Divine Liturgy was then celebrated in the chapel

with Rev. Nareg Pehlivanian, Pastor of Holy Cross Cathedral in Montebello, as the celebrant. Rev. Pehlivanian also delivered the sermon. Following the traditional ceremony of the blessing of grapes and the conclusion of services, clergy members visited residents to offer prayers and blessed grapes and also met with directors and staff.